

Շնորհաւորելի է ցանկերու մէջ՝ «Է. Գրչութեան վայրերու ցանկ, Ը. Գրիչներու ցանկ, Թ. Մաղկողներու ցանկ, Ժ. Կազմողներու ցանկ եւ ԺԳ. ու ԺԴ. Կնիքներու ցանկ»երը, որոնք ընդհանրապէս կը պակսին բազմաթիւ ցուցակներու մէջ:

Արդար ըլլալու համար անկեղծօրէն պէտք է խոստովանիլ, թէ հակառակ ակնարկուած որոշ թերութիւններու, որ աչքի կը զարնեն մանաւանդ այնպիսի գործերու մէջ, ուր ունինք համեմատական եզրներ. բաղդատութեան համար, Դանիէլեանի գոր-

ծը իր բազմաթիւ լրացումներով եւ նորութիւններով կու գայ նոր արժէք մը աւելցնելու հայագիտութեան ու ձեռագրագիտութեան անդաստանին մէջ: Կը շնորհաւորենք Դանիէլեան Անուշաւան Վարդապետը իր այս մեծարժէք գործին համար, եւ իր անձին միջոցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Միաբանութիւնը, որ մանաւանդ վերջին տասնամեակներուն, հայագիտութեան կարեւոր կենդրոն մը դառնալու վրայ է սփիւռքահայ իրականութեան մէջ:

ՍԵՔՈՒԼԵԱՆ Հ. Օ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**ԿՈԹՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՀԱՍԱԻ ԻՐ ԱԻԱՐՏԻՆ**

Լոյս տեսաւ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան Մատենադարանի ձեռագրացուցակի երրորդ հատորը

Անցեալ դարի կէսերին հայկական սկզբնաղբերներին հանդէպ առաջ եկած բուն հետազոտութեան թելադրանքով Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան հայագիտական դպրոցի առաջ ծառանում է համապարփակ ու զիտական բնոյթի ձեռագրացուցակ կազմելու խնդիրը: Միխիթարեան Հայրերը կոչ են անում համազգային առումով ձեռնարկել Մայր Զեռագրացուցակը տեղծելու յոյժ կարեւոր աշխատանքները, եւ իրենք տալիս են այդ գործի առաջին եւ խրատական օրինակը: 1891 թուականին Միաբանութեան տպարանում լոյս է տեսնում Հ. Յակոբոս վ. Տաշեանի կազմած «Ցուցակ Հայերէն Զեռագրաց Կայսերական Մատենադարանի ի Վիեննա» գրքովը, ապա նաեւ Հ. Գրիգորիս վ. Գալեմբեարեանի՝ «Միւս խնդիր Արքեպիսկոպոս Մատենադարանի Հայերէն Զեռագրաց Ցուցակ»ը: Միխիթարեանների կոչը եւ նախաձեռնութիւնը լայն արձագանք է առաջ բերում աշխարհի ամենատարբեր հայագիտական օջախներում եւ ահա Պետերբուրգում այդ գործը նախաձեռնում է Նիկողայոս Մառը, Բրիտանիայում՝ Ս. Վ. Պարոնեանը, Հոռոմում՝ Յ. Վ. Միսքեանը, Թիֆլիսում՝ Ս. Կանայեանը, եւ ուրիշներ:

1895 թուականին Վիեննայում լոյս է տեսնում այդ շարքի ամենից կատարեալ ու ծանրակշիռ ժողովածուն, խօսքը Հ. Յակոբոս վ. Տաշեանի «Ցուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա» խորագրով աշխատութեան մասին է:

Ըստ «Հայկական մատենագիտութիւն» երկհատորեայ աշխատութեան տուեալների, սկզբից մինչեւ 1976 թուականը կազմուած հայկական ձեռագրացուցակների ընդհանուր քանակը (տպագրուած եւ ձեռագիր) հասնում է 355 միաւորի: Այս պատկառելի թուակազմում Հ. Յակոբոս վ. Տաշեանի հեղինակած ձեռագրացուցակը իր արժանիքներով տակաւին մնում է չգերազանցուած:

Աւելին, այդ ձեռագրացուցակի լոյս աշխարհ դալուց անցել է շուրջ իննը տասնամեակ եւ այսուհանդերձ ժամանակի այդ ոչ փոքր հոլովոյթի ընթացքում, երբ հասարակայնօրէն մեծացել է տեղեկատուութեան տեսակարար կշիռը, երբ սեղմ եւ ստույգ տեղեկութիւն ձեռք բերելու պահանջը դարձել է դարաշրջանի կենսական հարցերից մէկը, ո՛չ միայն չի խամբել Հ. Տաշեանի գործի հասարակական արժէքը, այլեւ այդ աշխատութիւնը ձեռք է բերել զիտական ու հասարակական նոր իմաստաւորում:

Հ. Յակոբոս Տաշեանի ձեռագրացուցակը ունի նաեւ մի այլ, արդիականութեան տեսակէտից շատ կարեւոր, առաւելութիւն: Հեղինակը առանձին բաժին է յատկացրել ձեռագրերի նկարագրութեան եւ բովանդակութեան գերմաներէն համառոտագրութեանը, ինչը Միաբանութեան մէջ մթերուած ձեռագրերի բովանդակութեանը հաղորդակից է դարձնում նաեւ օտարազգի ուսումնասիրողներին:

Ձեռնարկելով Միխիթարեան Միաբանութեան Մատենադարանում մթերուած թիւ 1-573 ձեռագրերի զիտական նկարագրութիւնը եւ այդ ամէնը ամփոփելով 1529 էջից բաղկացած Ա. հատորի մէջ, Հ. Տաշեանը ստեղծել է ոչ միայն ձեռագրացուցակ մշակելու ինքնուրոյն ու յոյժ զիտական մի դրակոյց, այլեւ նախանշել է իր հետնորդների՝ այդ գործը թիւ 573 ձեռագրից յետոյ շարունակողների աշխատանքի ոճական ուղին:

Ոչ մեծ դադարից յետոյ Միաբանութեան անդամ բազմավաստակ գիտնական Հ. Համազասպ վ. Ոսկեանը շարունակում է երջանկահիշատակ Հ. Յակոբոս Տաշեանի սկսած գործը եւ շուրջ չորս տասնամեակ անց 1964 թուականին Միաբանութեան տըպարանում լոյս է տեսնում «Ցուցակ Հայերէն Զեռագրաց Միխիթարեան Մատենադարանին ի Վիեննա» աշխատութեան նաեւ Բ գիրքը:

1156 էջից բաղկացած այս ստուար հատորի մէջ Հ. Համազասպ Ոսկեանը, Տաշեանի մշակած սկզբունքների կիրառումով հրատարակ է հանում Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանում 574-1304 թուահամարների տակ գրանցուած ձեռագրերի գիտական նկարագրութիւնը: Նման աշխատութիւն լոյս ընծայելու համար պէտք է կարգալ Մատենադարանում պահուող 730 միաւոր ձեռագրերը եւ իւրաքանչիւր դէպքում նկարագրութեան մէջ պատասխանել գիտական մօտեցում պահանջող բազմաթիւ հարցերի, այդ նշանակում է տալ ձեռագրերի բնութագրականը ապա բնորոշ քաղուածքների միջոցով ընթերցողին ծանօթացնել բովանդակութեան հետ: Եթէ հաշուի առնենք նաեւ աշխատասիրողի կիրառած բծախնդիր հետեւողականութիւնը, ապա հասկանալի կը դառնայ, որ նման մի աշխատանք կարելի է իրականացնել միայն մեծ նուիրումի եւ տըքնաջան աշխատասիրութեան շնորհիւ: Պէտք է նշել, որ ժամանակին գիտակցուել է Հ. Ոսկեանի ատարած գործի մեծութիւնը եւ մամուլի էջերում ըստ արժանւոյն գնահատուել է նրա վաստակը: Լոյս ընծայելով իր տասնամեակների տքնութեան արդիւնքը Հ. Ոսկեանը եւ Տաշեանի նման նախանշում է իր հետնորդի աշխատանքային ուղին: «Մնացածները եւ դեռ հաւաքուելիքները, — գրում է նա երկրորդ հատորի առաջաբանում, — նիւթ պիտի մատակարարեն յաջորդ հատորներու»:

Յատկանշական է Հ. Ոսկեանի արած այս հաւաստիացումը, ինչպէս յայտնի դարձաւ երրորդ հատորի լոյս ընծայումով, Մատենադարանի գրապահոցներում իրօք որ «մնացածներ» կային: Յայտնի է, որ դեռեւս արեստեան շրջանից Մխիթարեան Հայրերը նախանձախնդիր հետեւողականութիւն են հանդէս բերում մշակութային գանձերի հաւաքման գործում եւ նրանց Մատենադարանում կենտրոնացում են մեծ քանակութեամբ ձեռագրեր: Հաւաքչական աշխատանքները շարունակում են նաեւ հետագայում եւ այսօր Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանը համարում է աշխարհի ամենահարուստ հայերէն ձեռագրատներից մէկը: Երջանկայիշատակ Հայրերի հաւաքչական գործը ո՛չ պակաս հետեւողականութեամբ շարունակում են նաեւ հետնորդները, որոնց մէջ արժանի են յիշատա-

կութեան. Հ. Գրիգորիս Գալեմքեարեանի, Հ. Բառնարաս Պիլեղիկեանի, Հ. Օգոստինոս Ամրիկեանի, Հ. Մատթէոս Հաճեանի, Հ. Ներսէս Ակիմեանի, Հ. Հմայեակ Համբարեանի, Հ. Սարգիս Բարոյեանի, Հ. Պետրոս Տէր Պօղոսեանի եւ ներկայիս Արբահայր՝ Գրիգորիս Մանեանի անունները:

Ընդունուած է, որ նման արժէքաւոր կուտակումները խթանում են հրատարակչական գործին եւ չանցած երկու տասնամեակ իրականութիւն է դառնում Հ. Ոսկեանի «յամմաբարակամը» 1983 թուականին Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան տպարանում Հ. Օգոստինոս վ. Սեքուլեանի աշխատասիրութեամբ մամուլի տակից դուրս է դալիս այդ կոթողային գործի նաեւ երրորդ եւ վերջին հատորը: Եթէ չհաշուենք առաջին հատորում եղած ձեռագրացուցակի դերմաներէն թարգմանութիւնը, ապա այս նոր լոյս տեսած գիրքը, թէ՛ էջերի, եւ թէ՛ ներառնուած ձեռագրերի քանակով, աւելի մեծ ու ծաւալուն, քան նախորդ առաջին եւ երկրորդ հատորները: 1216 լայնադիր էջերի մէջ Հ. Սեքուլեանը ընթերցողին է ներկայացնում 1256 միաւոր ձեռագրի նկարագրութիւն: Ուրախութեամբ պէտք է արձանադրել, որ Հ. Սեքուլեանի կողմից լիովին յաղթահարուած են նախորդ հատորներում կիրառուած սկզբունքները: Նա հայագիտութեան սեղանին է դրել ստուարածաւալ մի աշխատասիրութիւն, որը ոչ միայն ձեռագրերի հերթական համարակալումով, այլեւ ուղղակի իմաստով հանդիսանում է մեծ երախտաւորներ Հ. Տաշեանի ու Հ. Ոսկեանի գործի շարունակութիւնն ու զարգացումը:

Հ. Համազասպ Ոսկեանը երկրորդ հատորի առաջաբանում դիտել է տալիս որ իր ձեռնարկած գործը կազմաւորուել է չորս տասնամեակի ընթացքում: Հ. Օգոստինոս Սեքուլեանը նման հաւաստիացում չի անում, բայց այդ դեռ չի նշանակում, թէ այս դէպքում նոյնքան աշխատարար չի եղել երրորդ հատորի ծնունդը:

Նոր Ձուղայի ձեռագրացուցակի մասին «Հանդէս Ամսօրեայի» մէջ հրատարակած գրախօսականում Հ. Սեքուլեանը Տաշեանի կոթողային գործի հետ չափվելը համարելով անհնար այդ գործով գրադուողներին. խորհուրդ է տալիս հանդէս բերել գէթ միմտուելու ձգտում: Բնաւ չցանկանալով վիրաւորել

վաստակաշատ ձեռագրագէտի համեստութիւնը, պէտք է ասել, որ նրա հեղինակած ձեռագրացուցակը չափուելու աստիճան մօտենում է Տաշեանի կազմած հատորին՝ բոլոր առումներով, եւ եթէ ինչ որ բան պակասում է հաւասարուելու համար, ապա դա վերաբերում է ո՛չ թէ կատարուած աշխատանքին, այլ ցանկի մէջ ներառնուած ձեռագրերի բնոյթին:

Չպէտք է անգիտանալ, որ Հ. Սեքուլեանի կազմած հատորում ցանկագրուած բնագրերի մեծադոյն մասը, չեն կարող դասուել ձեռագիր հասկացութեան դասական օրինակների թուին, քանի որ այստեղ չկան մանրանկարչութեան գոհարներ, զըլխազարդեր ու լուսանցազարդեր, որ այս ձեռագրերը արժէք չեն ներկայացնում զըրջութեան արուեստի տեսակէտից եւ այլն, եւ այլն: Իրողութիւն է, որ այս հատորում գրանցուած ձեռագրերի մեծադոյն մասը չեն կարող ուշադրութեան արժանանալ հնութեան առումով: Ի դէպ նման հարցադրում ծագել է նաեւ երկրորդ հատորի տպագրութեան առիթով եւ քննադատութիւնը ժամանակին հարց է բարձրացրել «դիւանական բնոյթ եւ արժէք» ունեցող ձեռագրերի ցանկագրումը «զանց ընել»: «Ձանց ընելու» պահանջը տուեալ դէպքում հարցի լուծման լաւագոյն միջոցը չէ, եւ ոչ էլ ունի արմատական դրապատմաոններ: Աւելին, բանասիրութիւնը շատ արժէքներ չըջանցած կը լինէր եթէ այդ մտայնութիւնը իրականութիւն դառնար: Մեր խորին համոզմամբ նորօրեայ ձեռագրերը չի կարելի եւ չպէտք է գնահատել նախորդների համար աւանդութեան կողմից սահմանուած չափանիշներով:

Պէտք է հաշտուել այն իրողութեան հետ, որ տպագրութեան մեծ գիւտի հետեւանքով, զարգացմանը համընթաց, նոր ըստեղծուող ձեռագրերը կորցնում են իրենց աւանդական տեսքն ու կերպը: Գրատպութեան գոյութեան պայմաններում ստեղծուած ձեռագրերը հետզհետէ ձեռք են բերում բոլորովին նոր տեսք, նոր արժէք եւ իմաստաւորում: Գաղտնիք չէ, որ նորօրեայ ձեռագրերից շատերը չունենալով գնահատելի արժէք հնութեան առումով, մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում հայագիտութեան համար, գիտութեան այսօրուայ չափանիշների սահմանազօում: Նման պարագայում ոչ

միայն պէտք է հաշտուել այդ իրողութեան հետ, այլեւ գնահատել, որ սոյն ձեռագրացուցակի մէջ եւս տեղի է ունեցել նախկինում ընդհանրացուած հասկացութեան ընդլայնում եւ իմաստային կողմի հարստացում: Արդիականութեան թելադրանքով անառարկելի է դառնում ձեռագրացուցակի մէջ ընդգրկման հարցում Հ. Սեքուլեանի մօտեցման ճշմարտացիութիւնը, ուստի մի նոր առումով մեծանում է նրա հրատարակած աշխատասիրութեան արժէքը:

Ձեռագրացուցակի նշանակութիւնը մեծ է ինքնին, սակայն այսօր՝ տեղեկատուութեան վիթխարի հոսքի պայմաններում՝ նրման կոթողային գործի լոյս ընծայումը ունի արդիականութեան նաեւ ա՛յլ կարգի պահանջները բաւարարող պարտաւորութիւն: Երեւանի Մատենադարանում հետազօտական աշխատանքով գրադուող գիտնականը այս ձեռագրացուցակի օգնութեամբ կարող է իրեն հետաքրքրող թեմայի վերաբերեալ տեղեկութիւններ յայտնաբերել Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանում մթերուած ձեռագրերի մէջ: Ձեռագրացուցակը, որքան համակողմանիօրէն ու արդիւնաւէտ է ծառայում այս նպատակին, ա՛յնքան մեծ է այդ աշխատութեան դերն ու արդիական արժէքը: Հասկանալի է, որ ձեռագրացուցակը նման խնդիր կարող է իրականացնել միայն ա՛յն դէպքում, երբ կազմուած է գործիմացութեամբ ու գիտական պատշաճ մակարդակով: Արժանապատուութեան զգացումով պէտք է արձանագրել, որ Հ. Սեքուլեանի կազմած ձեռագրացուցակը հենց այդպիսին է:

Մի առիթով ձեռագրացուցակի հեղինակը այն միտքն է յայտնում, որ նման աշխատասիրութեան, գնահատման գլխաւոր չափանիշը պէտք է դառնայ բնագրի բովանդակութեան հակիրճ ու համակողմանի արտաբերումը: Այս առաջադրանքի իրականացումը, որքան կարեւոր, նո՛յնքան էլ սովորական ու դիւրին է թուում: Սակայն այդպէս թուում է միայն, իրականում այդ նշանակում է կարգալ եւ ուսումնասիրել հատորի մէջ ներառնուած բոլոր ձեռագրերը, գիտական հիմունքներով մշակել ու նկարագրել այն եւ ապա կազմել ընթերցողին ներկայացուող հակիրճ բովանդակութիւնն ու բնութագրականը: Ծիշտ այդպէս է վարուել նաեւ այս

աշխատասիրութեան հեղինակ Հ. Սեքուլեանը: Հերթական թուահամարից ու վերնագրից անմիջապէս յետոյ հեղինակը նշում է բնագրի հին համարը, եթէ ունեցել է այդպիսին, ապա գրութեան վայրը եւ թուակաւորը: Անցնելով ձեռագրի նկարագրութեան, աշխատասիրողը ներկայացնում է բնագրի «կենսագրութեանը» վերաբերող շուրջ երեք տասնեակի հասնող հարցերի պատասխանները: Թուղթք, մեծութիւն, պրակք, գրութիւն, տողք, նիւթ, կազմ, պահպանակ, հանգամանք, գիր, թանաք, խորան, զարդարանք, զարդեր, նկարներ, դատարկ, ժամանակ, նորոգում, նորոգող, գրիչ, գրիչ սկզբնագիր, տեղի, տէր, ծանօթութիւն, ծաղկող, յիշատակագրութիւններ, յիշատակարան, տեղեկութիւն եւ այլն: Ահա այն հարցարանի ոչ լրիւ թուարկումը, որին տրուում է պատասխան իւրաքանչիւր ձեռագիր նկարագրութեան դէպքում: Աւարտելով նկարագրութիւնը Մատեանս է՝ բաժնում, աշխատասիրողը պարզաբանում է հեղինակի անձի ու գրութեան թուականի հետ կապուած փաստերը, ճշտում է խորագրային տուեալները եւ տալիս է ձեռագրի հակիրճ բնութագրականը: Բովանդակութիւնն ենթավերնագրի տակ բնագրից կատարում է կարճ ու իմաստաւորուած մէջբերումներ, որոնց ծաւալը երբեմն հասնում է 3 եւ ավելի էջերի, ընդմիջարկում է այն, բնութագրականներով ու բացատրականներով, շարունակում է այդ եղանակով նկարագրել ու բացայայտել ամբողջ բնագրի բաղադրամասերը, ցոյց տալով նաեւ էջահամարները: Սրանք ձեռագրացուցակի այդ հատուածներն են, որոնց միջոցով ուսումնասիրողը կարող է առաջին՝ անհրաժեշտ տեղեկութիւնը քաղել բնագրի պարունակութեան մասին, այն չափով, որ առանց սկզբնաղբիւրին դիմելու կարողանայ որոշել իրեն զբաղեցնող թեմայի համար այդ ձեռագրի պատկանելիութեան չափը: Մեր կարծիքով ձեռագրացուցակի ամենահիմնական ու գործնական կողմը սա է, որը ի պատիւ աշխատասիրողի իրականացում է գիտական բարձր մակարդակով:

Միւս կողմից, սրանք այնպիսի տեղեկութիւններ են, որոնց ստույգ ու անսխալ արտաբերումը կարելի է իրականացնել միայն ձեռագրերը ամբողջութեամբ կարդալուց եւ ուսումնասիրելուց յետոյ: Դիւրին է ասել, կարգալ եւ ուսումնասիրել բնագրերը այն

դէպքում, երբ ձեռագրացուցակում գրանցուած միաւորների քանակը հասնում է 1256-ի: Դարձեալ թերի կը մնայ աշխատանքի մեծութեան մասին մեր պատկերացումը, եթէ յայտնի չլինի, որ նկարագրութեան մէջ բերուող տուեալներից շատերը պակասում են ձեռագրերի մէջ եւ ի յայտ են դալիս հետազոտական աշխատանքի օգնութեամբ: Այստեղ է, որ աշխատասիրողից պահանջուում է ձեռագրագիտական հմտութիւն, առանց որի գրեթէ անհնար է նման մի աշխատութեան լոյսընծայումը: Եթէ ձեռագրերը ճանաչելու եւ մութը մնացած խնդիրները պարզաբանելու հարցում Հ. Սեքուլեանը ետ մընար իր նախորդներ Տաշեանից ու Ոսկեանից, ապա նրա կազմած ձեռագրացուցակը բնաւ չէր կարող հաւասար արժէք ունենալ:

Ձեռագրացուցակի անհրաժեշտ ու կարեւոր բաղկացուցիչ մասն է կազմում հատորին կցուած ցանկերի բաժինը: Հարկ կայ ասելու, որ առանց այս ցանկերի օգնութեան հետազոտողի համար շատ դժուար կը լինի դիմել անհատներին: Ընդ որում ցանկերը ոչ միայն յայտնաբերել: Ընդ որում ցանկերը ոչ միայն օգնում են հետազոտողին անհրաժեշտ տեղեկութիւններ ձեռք բերելու հարցում այլեւ խնայում են նրա ժամանակը, կանխելով գրքի անհամար էջերում, կամ ձեռագրերի կոյտի մէջ անհարկի ու ապարդիւն որոնումներ կատարելու: Այս պարագայում հասկանալի է, որքան բազմաբնոյթ են ու համակողմանի՝ կազմուած ցանկերը, ա՛յնքան մատչելի ու արդիւնաւէտ է դառնում ձեռագրացուցակից օգտուելը:

1073-1106 էջերում գետեղուած է. «Ընդհանուր Տախտակ Ձեռագրաց» խորագրով ցանկը, ուր ըստ հերթական թուահամարների բերուած են հատորում ընդգրկուած ձեռագրերը, իւրաքանչիւրի դիմաց նշուած է էջերի քանակը, չափսը, գրի տեսակը, գրութեան վայրը, գրիչը եւ ապա շատ սեղմ՝ բովանդակութիւնը:

1107-1138 էջերի մէջ ընդգրկուած է. «Նիւթերու համաձայն ցուցակ ձեռագրաց» ցանկը: Այստեղ ձեռագրերը դաս-դասուած են ըստ թեմաների եւ ամփոփուած են 52 անուն վերնագրի տակ: Որոշակի են ինչպէս այդ վերնագրերը, այնպէս էլ սահմանադատուած՝ գրանց տակ ամփոփուած ձեռագրերը: Ահա գրանցից մի քանիսը. աշխար-

հագրութիւն, աստղագիտութիւն, աստուածաբանութիւն, բառարաններ, բնական գիտութիւններ, դանձարան, երաժշտական, երգարան, թատերական, հին գրականութիւն, մատենագրութիւն, ճաշոց, ճարտարապետութիւն, մանկավարժութիւն, շարահնոց, ոսկեփորիկ, պատմութիւն հայոց, սաղմոսներ, տաղարան, տօնացոյց, փիլիսոփայութիւն, քերականութիւն եւ այլն:

Երաժշտական վերնագրի տակ ի թիւս մի շարք բնագրերի հետազոտողը կարող է հանդիպել. «Կոմիտաս վարդապետի սրբադրած Եկեմալեանի պատարագին» ցանկագրութեան: Ունենալով այս նկարագրութեան էջահամարը, բուն նիւթերի մէջ՝ 1378 թուահամարի տակ կարդում ենք. «Մատեանս յատուկ իմաստով ձեռագիր չէ Եկեմալեանի 1896-ին Լեյպցիկ-Վիեննա տպագրուած «Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ» տպագիր օրինակն է, որում վրայ Կոմիտաս վարդապետ մատիտով բազմաթիւ սրբագրութիւններ կատարած է: Այնուհետեւ... կազմը սեւ կաշեպատ ստուարաթուղթ է, վրան մնջումով ոսկեգիր՝ «Նորին Վեհափառութեան լուսամիտ Հովանաւորի Եկեղեցական երաժշտութեան Ամենախոնարհ նուէր ի Յօրինողէն» կազմուած է Թիֆլիս (ընդդժումները՝ աշխատասիրող Հ. Սեքուլեանինն է): Այս ասուած է, որ գիրքը Միաբանութեանն է յանձնել երաժշտագէտ Մուրէզն Թէրլէմէզեանը, հավաստելով, որ խաղաղի սրբագրումները կատարել է Կոմիտասը: Նկարագրութեան վերջում բերուած է այն բոլոր էջահամարները (41 էջ) որտեղ Կոմիտասը հայկական խաղաղութեամբ եւ եւրոպական նօտագրութեամբ յաւելումներ եւ սրբագրումներ է կատարել:

Բերենք մի այլ օրինակ Պատմութիւն Հայոց վերնագրի տակ ցանկագրուած է. Բաֆֆի Հայոց Պատմութիւն Ա, Հայոց Պատմութիւն Բ: Հիմնական բնագրում 1571 թուահամարի տակ կարդում ենք այս ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը. էջերի քանակը, չափը, տողերի քանակը, թուղթը, որակը, կազմի տեսակը եւ այլն: Գրի տեսակի դիմաց գրուած է. «Վարժ նարագայն տեղանդ դժուար ընթեռնելի շղագիր», իսկ գրիչի դիմաց կարդում ենք. «Վիպագիր Բաֆֆի»: Այնուհետեւ տրուած է բնութագրականը.

«Մատեանս է՝ Հայոց Պատմութիւն հայկազեանց հարստութիւն, սկզբից մինչեւ Արշակունեաց հարստութեան վերջը»: «Ամբողջը, — աւելացնում է աշխատասիրողը, — քաժանուած է 45 գլուխներու: Հանելի լեզուով գրուած նախակրթարանի դասագիրք մըն է», ապա բերում է ենթավերնագրային տուեալներ: 1572 թուահամարի տակ նոյնպիսի նկարագրութիւն տուած է նաեւ Բաֆֆու «Հայոց Պատմութեան» Բ հատոր ձեռագրի վերաբերեալ:

Բառարաններ վերնագրի տակ գրանցուած խորագրերը ցոյց են տալիս, որ Միաբանութեան Մատենադարանում հանգրուանում են 60 անուն ամենատարբեր բնոյթի՝ ամբողջական ու թերի բառարաններ, ինչպէս պարզուած է զուգակցուող բնութագրականներից գրանց մի մասը կարող են ունենալ միայն պատմական արժէք, սակայն կան այնպիսիները, որոնք արժէքաւոր են նաեւ այսօրուայ չափանիշներով:

Եւ այսպէս տասնեակ ու տասնեակ վերնագրեր ցանկում եւ բազում ձեռագրեր հատորի մէջ:

Սակայն բաւարարուենք այսքանով եւ նորից անդրադառնանք «Իրանական բնոյթ եւ արժէք» ունեցող ձեռագրերը «զանց ընելու» պարագային:

Եթէ անսալով քննադատութեան ձայնին «զանց ընէին» դիւանական բնոյթ ունեցող ձեռագրերը, ապա Կոմիտասի, Բաֆֆու եւ բազում յարանման արժէք ունեցող ձեռագրեր պէտք է մնային Մատենադարանի գրադարանների անյայտութեան մէջ, մինչդեռ աշխատասիրողը դիպուկ կերպով նկատում է, որ «այս գանձերը չեն հաւաքուիլ անկիւն մը դիզուելու կամ գանձարաններու մէջ արգելափակուելու համար»:

Մի պահ պատկերացնենք, որ դասական ձեռագրեր չլինելու պատճառով Կոմիտասի սրբագրումներին եւ Բաֆֆու Հայոց պատմութեանը տեղ չտրուէր այս ձեռագրացուցակում եւ մնային անյայտութեան մէջ: Անշուշտ, ձեռագրացուցակի ընդգրկման շրջանակի նեղացումը բնաւ չէր արդարացուի: Եւ յետոյ դասական համարուող ձեռագրերում միթէ հարկաբերո՞ւմ են հաշուում այս կարգի, ծանրակշիռ արժէք ունեցող նիւթերի քանակը: Պատասխանը ան-

չուշտ բացասական է: Եւ քանի որ այդպէս է, ապա միանգամայն արդարացուած է ձեռնադրացուցակի երրորդ հատորի իմաստային կողմի ընդլայնումը, եւ «գիւնանական» նիւթերի ներառումը:

Ըստ հերթականութեան այս բաժնում գետեղուած են նաեւ չորս այլ բնոյթի ցանկեր, որոնք աւել կամ պակաս յաջողութեամբ լրացնում են ձեռնադրացուցակի արժէքը:

Նրանք, ովքեր մօտիկից ծանօթ են ձեռնադրացուցակ կազմելու դժուարին ու յոգնեցուցիչ աշխատանքին, նրանք աւելի խորութեամբ կարող են զգալ, որ առանց մեծ նուիրումի, առանց մշակութային գործի հանդէպ ունեցած անհատնում սիրոյ նման կոթողային գործերը ասպարէզ չեն գալիս: «Մասնաւոր հրճուանք կը պատճառէ ամէն նոր հրատարակութիւն, — մի առիթով գըրում է ձեռնադրացուցակի հեղինակ Սեբուլեանը, — որ նուիրուած է մեր անցեալի

գանձերու ծանօթացման»: Այս տողերից յետոյ աւելի քան հասկանալի է, թէ ինչպիսի մեծ նուիրումով է նա յանձն առել այս դժուարին գործը: Առանց այդ նուիրումի, առանց ներքին մղումի, թերեւս անհնար կը լինէր, յաղթահարել եւ իր աւարտին հասցնել այս կոթողային գործը: Ուստի բանասիրութիւնը պէտք է երախտագիտութեան տուրք մատուցի այս մեծ գործի հեղինակին, որ յանձն է առել եւ իրականացրել է հայագիտութեան համար մի մնայուն աշխատութիւն:

Ձեռնադրացուցակի որակն ու մակարդակը եւ ծաւալը իրաւունք են տալիս, Մխիթարեան մեծերի՝ Տաշեանի, Ալիշանի ու Աւգերեանի, Այալեանի, Ինճիճեանի ու Ակիլեանի, Գովրիկեանի, Գալեմքեարեանի ու Ոսկեանի կողքին՝ թուարկելու նաեւ Հ. Օգոստինոս վ. Սեբուլեանի անունը:

Երևան, 1984

Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Հ. ԳՐԻԳՈՐ Վ. ՀԵՊՈՅԵԱՆԻ (1910—1985)  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ՝  
1927—1984

ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Երաժշտութեան բազմալստակ ուսուցիչը»<sup>1</sup> եղաւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամներէն՝ Հ. Գրիգոր Վարդապետ Հէպոյեան, որ վախճանեցաւ Վիեննա, Երկուշաբթի, 7 Յունուար 1985-ին՝ եւ թաղուեցաւ Զորեջարթի, Յունուար 16-ին մայրաքաղաքիս Կենդրոնական Գերեզմանատունը՝ Մխիթարեան Հայրերուն յատուկ դամբարանին մէջ՝:

Հ. Հէպոյեան էր նաեւ երաժիշտ, երաժշտագէտ, երգահան, երաժշտական քննադատ եւ դրաբարագէտ: Իբրեւ այսպիսի անձնաւորութիւն՝ ան հեղինակ է բազմաթիւ փոքր եւ մեծ երկերու, զորոնք դիտաշխարհին ներկայացնել կ'ուզեմ այս վաւերամատենադրական ուսումնասիրութեամբ՝ անոնց բովանդակութեան ամբողջական քննարկումն եւ որակումը ձգելով մասնադէտներուն:

Ըստ իս, Հ. Գրիգոր Հէպոյեանը լաւադոյն ճանչցողներէն, հասկցողներէն ու գնահատողներէն մին եղած է Նշան Պէշիկիթաշլեան, որուն 1963-ին տուած դիպուկ եւ ճշգրիտ նկարագրականը կը բնորոշէ անոր անձնաւորութիւնը. «Հ. Գրիգոր վրդ. Հէպոյեան՝ մարմին, միտք եւ հոգի երգով լի, նուազով առլի, երաժշտութեամբ լիուլի:

«Է տաղանդաւոր յօրինող, քանքարաւոր նուազող եւ ղեկավար շնորհալի: Ունի ուրիշ արժանիք մըն ալ, բայց քանքարաթաքոյց է, եւ սակայն ապացոյցը տուած է իր կարողութեամբ»:

<sup>1</sup> Այս վերտառութեամբ գնահատանքի յօդուած մը գրեք է Յ. Բրուսյան «Ավանդարդը» երեւանեան թերթին մէջ՝ 16 Նոյեմբեր 1987 թուականին, «Միածան» խորագիրն ունեցող եւ սփիւռքահայ կեանքը պատմագրող էջին է. սիւնակը:

<sup>2</sup> Հմմտ. Վիեննական Մխիթարեան Գիւան (ՎՄԳ), Անուանք անձանց որ է Վիեննա, էջ 45, թիւ 455:

<sup>3</sup> ՎՄԳ, Հ. Գր. Հէպոյեան տուփ (տփ.), Մահադէ, չիքմաքարին թիւն է Gruppe 30 C, Reihe 17, Nr. 2:

Թեան: Կրնայ ըլլալ առաջնակարգ երաժշտական քննադատ: Եթէ այդ հանդամանքով չ'երեւիր մամուլին մէջ, պատճառը հաւանաբար սա է, որ հրապարակային անկողմնակալ քննադատութիւնը չի պատշաճիր սքեմին ու իր բարի քաղցրութեան:

«Համակ ներդաշնակութիւն է: Իր էութիւնն ալ նման է երգի՝: Երաժշտագէտներուն մէջ հազուադէպ է պատահիլ խառնուածքներու՝ որոնք ներդաշնակուած ըլլան երաժշտութեան հետ, որոնց կեանքին ու գործին մէջ չզանուի ոչ մէկ փափփինի:

«Իր դէմքին վրայ, իր անուշափայլ ժպիտին հետ, կը թրթռայ յաճախ մանկական մի մեղեդի:

«Իր խօսակցութեան ձայնն անզամ մեղեդի է մտերմութեան:

«Դէմքը նման է նուազարանի: Ու մեր ներբողին մէջ չիք չափազանցութիւն»<sup>3</sup>ա:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թէեւ Հ. Հէպոյեանի կենսագրականը զանազան դէպքերուն եւ քանի մը տեղ համառօտ գիծերով տրուած է<sup>4</sup>, հոս յարմարադոյն առիթն է հրատարակել այն ձեռագիր Ինքնակենսագրութիւնը, զոր շարադրեր է

<sup>3</sup>ա Ն. Պէշիկիթաշլեան, Հոյլ մը հոգեւորականներ լիբանանեան, Հայ կաթողիկէ Հայրեր, Ե., Հ. Գրիգոր վրդ. Հէպոյեան, Հայրենիք (օրաթերթ), Պոսթըն 1963, Երեջարթի, Նոյեմբեր 5, էջ 3ա:

<sup>4</sup> Օրինակի համար՝ Յ. Բրուսյան, Երգեր Սփյուռքից, Երեւան 1976, էջ 140. Գ. Ստեփանյան, Կենսագրական Բառարան, Հտ. Բ., Երեւան 1981, էջ 182. Մարտինի, Հ. Գրիգոր վրդ. Հէպոյեան, Աւետիք, Մարտինի, Հ. Գրիգոր վրդ. Հէպոյեան, 1985, էջ 162—164 եւ Նոր շրջան, թիւ 1—3, Պէյրուս 1985, էջ 1—8: Ամսօրեայ, թիւ 1—12, Վիեննա 1985, էջ 1—8: Նուիրում, պարբերաթերթ Հ. Բ. Ը. Մ. Յովակիմեան-Մանուկեան Վարժարանի, ԺՁ. տարի, Պէյրուս 1968, թիւ 38, էջ 55—56: